

2984

ԱՏԱԼԻՆ

ԲՈԼԵԿԵՎԻԶՄԻ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ  
ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ



3 K 33

F - 81

Պետքան — ԲԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԹԵՐԵՎԱՆ • 1938



20 NOV 2008

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿՎԵՐԻ, ՄԻԱՅՆ

10 JUN 2005

ՀԿՀՀ Ար.

Բ-81

Ի. ՍՏԱԼԻՆ

ԲՈԼՇԵՎԻԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Խամակ «Пролетарская революция» ժողովակի խմբագրությանը

05.08.2013

2984

ԲԱԼԵՎԵՎԻԶՄԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ  
ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Խամակ „Пролетарская революция“ ժունիսի  
թմբագրաբյանը

Հարգելի ընկերներ:

Վճռականորեն բողոքում եմ Սլուցկու «Բոլշևիկները գերմանական սոցիալ-դեմոկրատիայի մասին նրա նախապատերազմյան ձգնաժամի շրջանում» հոկտեմբերյան ու կիսատրոցկիստական հոդվածը «Пролетарская революция» ժունիսի 1930 թ. № 6) վորպես դիմոկրուսիոն հոգված գետեղելու գեմ:

Սլուցկին պնդում է, թե Լենինը (բոլշևիկները) թերագնահատում եր գերմանական ու ընդհանրապես նախապատերազմյան սոցիալ-դեմոկրատիայի մեջ յեղած ցենտրալիզմի վտանգը, այսինքն՝ թերագնահատում եր քողարկված ոպորտունիզմի վտանգը, ոպորտունիզմի հանդեպ հաշովողականություն ցուցաբերելու վտանգը: Այլ կերպ ասած՝ ըստ Սլուցկու գուրս ե գալիս, վոր Լենինը (բոլշևիկները) անհաշտ պայքար չեր մղում ոպորտունիզմի դեմ, վորովհետեւ ցենտրալիզմի թերագնահատումն ըստ բանի եյտության հրաժարումն ե ոպորտունիզմի դեմ ծավալուն պայքար մղելուց: Այսպիսով գուրս ե գալիս, վոր Լենինը պատերազմին հախորդող ժամանակաշրջանում դեռևս իսկական բոլշևիկ չեր, վոր իմպերիալիստական պատերազմի ժամանակաշրջանում միայն, կամ նույնիսկ այդ պատերազմի վերջերքին Լենինն իսկական բոլշևիկ դարձավ: Այսպես ե պատմում իր հոդվածում Սլուցկին: Իսկ դուք, փոխանակ նշավակելու այս նորանայտ «պատմաբանին» վորպես զրոյարացի ու կեղծարարի, դիմոկրուսիայի յեք բռնվում նրա հետ, նրան տրիբունա յեք տալիս: Չեմ կարող չըսպոքել Սլուցկու հոգ-



271  
39

И. СТАЛИН  
О НЕКОТОРЫХ ВОПРОСАХ  
ИСТОРИИ БОЛЬШЕВИЗМА

Армгиз—Издательство  
полит. литературы:  
Ереван, 1938

վածը վորպես դիսկուսիոն հոդված ձեր ժուռնալում զետեսիլու գեմ, վորովհետև չի կարելի դիսկուսիայի տուրքացարձնել Լենինի բոլեկիության հարցը, այն հարցը, թէ Լենինն սկզբունքային անհաշտ պայքար մղամ եր արդյոք ցենտրիզմի՝ վորպես ոպորտունիզմի վորոշ տեսակի՝ գեմ, թէ պայքար չեր մղամ, Լենինն իսկական բոլշևիկ եր, թէ այդպիսին չեր:

«Խմբագրության կողմից» արած ձեր հայտարարության մեջ, վոր Կենտկոմ և ուղարկվել հոկտեմբերի 20-ին, գուշ ընդունում եք, վոր խմբագրությունը սխալ և թույլ տվել՝ զետեղելով Սլուցկու հոդվածը վորպես դիսկուսիոն հոդված։ Այդ, ինարկե, լավ ե, չնայած վոր խմբագրությանդ հայտարարությունը լույս և տեսնում մեծ ուշացումով։ Բայց գուշ ձեր հայտարարության մեջ թույլ եք տալիս նոր սխալ, հայտարարելով, թէ «խմբագրությունը քաղաքականական ծայր աստիճանի ակտուալ ու անհրաժեշտ համարում պրոլետարիատի այն ամբողջ խմբի հետագա մշակումը «Пролетарская революция»-ի եջերում, վարոնք կապաֆած են բոլշևիկների ու մինչպատերազմյան II ինտերնացիոնալի գոփինարարելության հետ»։ Այդ նշանակում ե, վոր գուշ մտադիր եք մարդկանց նորից գիսկուսիայի մեջ ներքաշելու այն հարցերի վերաբերմամբ, վորոնք բոլշևիզմի աքսիոմաներն են։ Այդ նշանակում ե, վոր Լենինի բոլշևիկության հարցը գուշ նորից ուղում եք աքսիոմայից վերածել «հետագա մշակման» կարոտ մի պրոբլեմի։ Ի՞նչու, ի՞նչ հիման վրա Բոլորին հայտնի յի, վոր լենինիզմը ծընվել անձել ու ամրացել և անողաք պայքարում, ամեն յերանգի ոպորտունիզմի գեմ, այդ թվում ցենտրիզմի գեմ Արևմտարքում (Կառուցկի), ցենտրիզմի գեմ՝ մեղանում (Տրոցկի և ուրիշները)։ Այս չեն կարող ժխտել բոլշևիզմի մինչև անգամ ուղղակի թշնամիները։ Սա աքսիոմա յի։ Իսկ գուշ մեզ քաշում եք գեղի հետ, վարձելով աքսիոման գարձնել «հետագա մշակման» յենթակա պրոբլեմ։ Ի՞նչու ի՞նչ հիման վրա Գուցե բոլշևիզմի պատմությանն անծանոթ լինելու պատճառով։ Գուցե ի սեր փառած լիրականացման, վորպեսզի Սլուցկիները և Տրոցկու այլ աշա-

կերտաները չկարողանան ասել թէ իրենց բերանը փակում են։ Բավական տարրինակ լիրերալիզմ, վոր կիրավում ի հաշվի բոլշևիզմի կենսական շահերի...

Խմբագրությունդ Սլուցկու հոդվածում իսկապես Բնիչն և դիսկուսիոն քննարկման արժանի համարում։

1) Սլուցկին պնդում ե, թէ Լենինը (բոլշևիկները) գիծ չեր վարում գեղի խողում, գեղի պառակառում գերմանական սոցիալ-գեմոլիրատիայի ուղղությունիստների հետ, մինչ պատերազմյան ժամանակաշրջանի Ա Խնտերնացիոնալի ոպորտունիստների հետ։ Դուք ուղում եք գիսկուսիա մղել Սլուցկու այս տրոցկիստական թեզիսի գեմ։ Բայց այսուղ Բնիչ գիսկուսիոն բան կա։ Միթե պարզ չե, վոր Սլուցկին ուղղակի զրաքարտում և Լենինին, բոլշևիկներին։ Զրաքարտությունը հարկավոր է նշանակել, և վոչ թէ գիսկուսիայի առարկա զարձնել։

Ամեն մի բոլշևիկ, յեթե նա իսկապես բոլշևիկ ե, գիտե, վոր գեռնս պատերազմից շատ առաջ, մոտավորապես 1903—1904 թվականներից, յերբ Ռուսաստանում ձեավորվեց բոլշևիկների խումբը, և յերբ գերմանական սոցիալ-գեմոլիրատիայի ձափերն առաջին անգամ իրենց գոյությունն իմանալ տվին, — Լենինը գիծ եք վարում գեղի խողում, գեղի պառակառում ոպորտունիստների հետ թե մեղանում, ուղանատանյան սոցիալ-գեմոլիրատական կուսակցության մեջ, թե այնուղ Ա Խնտերնացիոնալարում, մասնավորապես գերմանական սոցիալ-գեմոլիրատիայի մեջ։ Ամեն մի բոլշևիկ գիտե, վոր հենց այս պատճառով բոլշևիկներն արդեն այն ժամանակ (1903—1905) Ա Խնտերնացիոնալի ոպորտունիստների շարքերում «պառակտիչների» ու «կազմականացիների» պատվավոր հոչակ վաստակեցին։ Բայց Բնիչ կարող եք անել Լենինը, Բնիչ կարող եյին անել բոլշևիկները, յեթե ձախ սոցիալ-գեմոլիրատները Ա Խնտերնացիոնալարում ե, ամենից առաջ, գերմանական սոցիալ-գեմոլիրատիայի մեջ թույլ ու անզոր մի խումբ եյին, կազմակերպորեն չձեավորված, իդեոլոգիապես չկոփած մի խումբ, վորը «կառում», «պառակտում» բառը նույնիսկ վախենում եք արտասանել։ Հո չի կարելի պահանջել, վոր-

պեսզի Լենինը, վորագեսզի բոլշևիկները Ռուսաստանից ձախերի փոխարեն պառակտում սարքելին արևմտյան կուսակցություններում: Ել յետ չեմ խոսում այն մասին, վոր կազմակերպական ու իդեոլոգիական թուլությունը ձախ սոց-դեմ բնորոշ գիծն եր վոչ միայն մինչչպատերազմյան ժամանակաշրջանում: Դա, այդ բացառական գիծը, ինչպես հայտնի յե, ձախերը պահպանեցին նաև հետպատերազմյան ժամանակաշրջանում: Բոլորին հայտնի յե գերմանական ձախ սոց-դեմ, մասին տրված գնահատականը Լենինի «Յունիուսի բրոցյուրի մասին»<sup>1</sup> հայտնի հոդվածում, վոր գրված և 1916 թվի հոկտեմբերին, այսինքն՝ պատերազմի սկզբից ավելի քան յերկու տարի անց, վորտեղ Լենինը, քննադատելով ձախ սոց-դեմ, մի ամբողջ շարք լրջագույն քաղաքական սխալները Գերմանիայում, խոսում ե բոլոր գերմանական ձախերի բուլության մասին, վորտեղ բոլոր կողմերից պատեղ ե կառուցկիական կեղծավարության, պեղանության, ոպարտունիսների նկատմամբ «ունեցած բարեկամափության» նոդիալի ցանցը, վորտեղ նաև պատմամատիրության մեջ ցանցը», վորտեղ նաև խոսում ե այն մասին, վոր «Յունիուսը լիովին չի տպատճեր գերմանական, մինչև տեղամատիրության ձախ սոցիալ-դեմոկրատների, «միջավայրից», վարոնի վախենում են պառակտումից, վախենում են հեղափոխական լոգունիքները լրիվ մինչև վերջն ասելուց»:

II Իստերնացիոնալի բոլոր խմբավորումներից սուսական բոլշևիկներն այն ժամանակ միակ խմբավորումն ենին, վորն իր կազմակերպական վորձով ու իդեոլոգիական կովկածությամբ ընդունակ եր ձեռնարկելու վորեն լուրջ բան ուղղակի խղման, պառակտման խմաստով՝ իրենց ոպորտունիսների հետ իրենց սուսաստանյան սոցիալ-դեմոկրատիայի մեջ: Այ, յեթե Սլուցկիները փորձ անեցին մինչև անգամ վնչ թե ապացուցելուց, այլ պարզապես յենթագրելու, թե Լենինն ու սուսական բոլշևիկները չեն ոգտագործել իրենց ամբողջ հղորությունը, վորագեսզի կազմակերպեն պառակտումն ոպորտունիսների հետ (Պետքանով, Մարտով, Դան) ու վանդեն ցենտրիստներին (Տրոցկի ու

<sup>1</sup> Յունիուսը Ռուսական բոլշևիկների մեջ ձախ սոց-դեմ, լիդերը գերմանական սոցիալ-դեմոկրատիայի մեջ:

Ոգոսոսայան բլոկի այլ կողմնակիցներ), ապա այն ժամանակ կարելի կլիներ վիճել Լենինի բոլշևիկության մասին, բոլշևիկների բոլշևիզմի մասին: Բայց բանն ել հենց այն ե, վոր Սլուցկիները չեն համարձակվում մինչև անդամ ծպտուն հանել հոգութ այդպիսի վայրենի յենթագրության: Զեն համարձակվում, վորովհետեւ գիտեն, վոր սուսական բոլշևիկների կողմից ամեն յերանգի ոպորտունիսների հետ կապերը խղելու համար կիրառված (1904—1912 թ. թ.), վճռական քաղաքականության ամենքին հայտնի փաստերն աղաղակում են այդպիսի յենթագրության դեմ: Զեն համարձակվում, վորովհետեւ գիտեն, վոր իրենք մյուս որն սեթ անարգանքի սյունին կդամվին:

Բայց ահա մի հարց, սուսական բոլշևիկները կարող եյին արգյուք իրականացնել պառակտումն իրենց ոպորտունիսների ու ցենտրիստ-հաշտվողականների հետ իմպերիալիստական պատերազմից շատ առաջ (1904—1912 թ. թ.)՝ զրա հետ մեկտեղ գիծ չվարելով դեպի խղումը, զիծ դեպի պառակտումը II Իստերնացիոնալի ոպորտունիսների ու ցենտրիստների հետ: Ո՞վ կարող ե կասկածել այն մասին, վոր սուսական բոլշևիկներն ոպորտունիսների ու ցենտրիստների նկատմամբ վարած իրենց քաղաքականությունը համարում եյին քաղաքականության տիպար Արևմուսաքի ձախերի համար: Ո՞վ կարող ե կասկածել այն մասին, վոր սուսական բոլշևիկներն Արևմուտքի ձախ սոց-դեմոկրատներին, մասնավորապես գերմանական սոցիալ-դեմոկրատիայի ձախերին ամեն կերպ մղում եյին դեպի խղում, դեպի պառակտում իրենց ոպորտունիսների ու ցենտրիստների հետ: Լենինի ու սուսական բոլշևիկների մեղքը չե, յեթե Արևմուտքի ձախ սոց-դեմ: հասունացած գուրս չեկան այն բանի համար, վորագեսզի սուսական բոլշևիկների հետքերով գնան:

2) Սլուցկին կշտամբում ե Լենինին ու բոլշևիկներին, վոր նրանք գերմանական սոց-դեմ: մեջ յեղած ձախերին չեյին աջակցում վճռաբար ու անդամունալի կերպով, վոր նրանք վերջիններին պաշտպանում եյին լուրջ վերապահումներով միայն, վոր Փրակցիոն նկատմառաւմները նրանց

խանգարում եյին մինչև վերջն աջակցելու ձախերին։ Դուք ուղարկում եք դիսկուսիա մզկիլ այս շառավատանական ու տեղովը կեղծ կշտամբանքի դեմ։ Բայց այստեղ խոկապես ինչ դիսկուսիոն բան կա։ Միթե պարզ չե, վոր Սլուցկին այստեղ մանկվում ե և Անինի ու բոլցեիկների դեմ ուղղված կեղծ կշտամբանքով աշխատում ե քողարկել Եերմանիայի ձախերի դիրքի իսկական բացերը։ Միթե պարզ չե, վոր բոլցեիկները չեյին կարող աջակցել ձախերին Գերմանիայում, վորոնք հենց մի զույն տատանվում եյին բոլցեիկմի ու մենշնկոմի միջև առանց լուրջ վերապահումների, առանց նրանց սխաների լուրջ քննադատության, չբավանական բանվոր դասակարգին ու նրա հեղափոխությանը։ Խարերայական մանյովըները հարկավոր ե նշավակել և վոչ թե դիսկուսիայի առարկա դարձնել։

Այս, բոլցեիկներն աջակցում եյին ձախ սոց.-դեմ։ Գերմանիայում միայն վորոշ լուրջ վերապահումներով՝ քննադատում նրանց կիսամենշնեիկյան սխաները։ Բայց որա համար հարկավոր ե նրանց վողջունել և վոչ թե կշտամբել։

Կան մարդիկ, վորոնք կասկածում են սրանում։

Դիմենք պատմության ամենից ավելի հայտնի փառակերին։

ա) 1903 թվին լուրջ տարածայնություններ դրանոր վեցին Ռուսաստանի բոլցեիկների ու մենշնեիկների միջև կուսակցության անդամության հարցի առթիվ։ Կուսակցության անդամության մասին իրենց ձեակերպումով բարեիկներն ուղարկում եյին կազմակերպական սանձ ստեղծել վոչ-պրետարական տարրերի՝ կուսակցության ներսը հօրդելու դեմ։ Այդպիսի հորդման վտանգն այս ժամանակ ավելի քան ոնալ եր՝ ուղարկան հեղափոխության բուրժուա-դեմոկրատական բնույթի չնորհիվ։ Ռուսական մենշները հակառակ դիրք եյին պաշտպանում, վորը կուսակցության դաները լայնորեն բաց եր անում վոչ-պրո-լետարական տարրերի առջև։ Քանի վոր ուղարկան հեղափոխության հարցերը կարեոր նշանակություն ունեյին համաշխարհային հեղափոխական շարժման համար, արեւտայելվուական սոցիալ-դեմոկրատները վճռեցին միջամտել

գործին։ Միջամտեցին նաև Գերմանիայի ձախ սոցիալ-դեմոկրատները՝ Պարվուսն ու Ռոզա Լուքսեմբուրգը, ձախերի այն ժամանակվա լիգերները։ Յեկ Բնչ Նրանք յերկուան ել բոլցեիկներին դեմ արտահայտվեցին։ Բնդամին բոլցե-վիկների հասցեյին մեղադրանք պղբավեց, թե նրանք ուղացենարարական ու բանկիստական տեհունցներ ունեն։ Հետապայում մենշնեիկները վորդեգրեցին այդ գոենիկ ու քաղքենիական եպիտետներն ու տարածեցին ամբողջ աշխարհով մեկ։

բ) 1905 թվին բոլցեիկների ու մենշնեիկների միջև Ռուսաստանում տարածայնություններ ծավալվեցին ուղարկան հեղափոխության բնույթի շուրջը։ Բոլցեիկները պաշտպանում եյին բանվոր դասակարգի գաշինքի գաղափարը գյուղացիության հետ՝ պրոլետարիատի հեգեմոնիայի պայմանով։ Բոլցեիկները պնդում եյին, վոր գործը հարկավոր է տանել դեպի պրոլետարիատի ու գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական զիկտատուրան այն հաշվով, վորպեսզի բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունից անհապաղ անցում կատարվի դեպի սոցիալիստական հեղափոխությունը՝ ապահովելով աջակցությունը գյուղի չքավորության կողմից։ Մենշնեիկները Ռուսաստանում մերժում եյին բուրժուա-դեմոկրատական հեղափոխության մեջ պրոլետարիատի հեգեմոնիայի գաղափարը, լիբերալ բուրժուազիայի հետ համաձայնություն ունենալու քաղաքականությունը նրանք գերադասեցին բանվոր դասակարգի՝ գյուղացիության հետ գաշինք ունենալու քաղաքականությունից, իսկ պրոլետարիատի ու գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական զիկտատուրան հայտարարեցին հետադիմական բլանկիտական սիսեմա, վորը հակասում է բուրժուական հեղափոխության զարգացմանը։ Ի՞նչպես վերը կերպեցին այս վեճերին գերմանական սոցիալ-դեմոկրատիայի ձախերը՝ Պարվուսն ու Ռոզա Լուքսեմբուրգը։ Նրանք հնարեցին պերմանենտ հեղափոխության ուղուանդիական ու կիսամենշնեիկյան սիսեման (հեղափոխության մարքսիզման սիսեմայի այլանդակ պատկերումը), վորն ամբողջովին տոպորված եր բանվոր դասակարգի ու գյուղացիու-

թյան գաշինքի քաղաքականության մենչելիկյան ժխտումով, և այն հակադրեցին պրոլետարիատի ու գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի բոլշևիկյան սխեմային: Հետագայում Տրոցկին (մասամբ և Մարտով) վորդեգրեց պերմանենու հեղափոխության այս կիսամենշելիկյան սխեման ու լենինիզմի դեմ պայքարելու գործիք գարձրեց:

Դ) Պատերազմին նախորդած ժամանակաշրջանում Արևոտերնացիոնալի կուսակցություններում հրապարակ յեկալ, վորպես ամենաակտուալ հարցերից մեկը, աղջային-գաղութային հարցը, ճնշված աղջերի ու գաղութների հարցը, ճնշված աղջերի ու գաղութների աղատագրման հարցը, իմպերիալիզմի դեմ պայքարելու ուղիների հարցը, իմպերիալիզմի տապալման ուղիների հարցը: Պրոլետարական հեղափոխությունը ծավալելու և իմպերիալիզմը շրջապատելու շահերի տեսակետից՝ բոլշևիներն առաջարկեցին ճնշված աղջերի ու գաղութների աղատագրական շարժման աղջերի ինքնորոշման բազայի վրա աշխացելու քաղաքականություն ու զարգացրին առաջավոր յերկրների պրոլետարական հեղափոխության և զաղութների ու ճնշված յերկրների ժողովուրդների հեղափոխական-աղատագրական շարժման միջն միասնական ճակատ ստեղծելու սխեման: Բոլոր յերկրների ողորառունիտաները, բոլոր յերկրների սոցիալ-շովինիտաներն ու սոցիալ-իմպերիալիստները չհապաղեցին այս կապակցությամբ զինվելու բոլշևիների դեմ: Բոլշևիներին՝ հալածում եյին ինչպես կատաղած շների: Այդ ժամանակ ինչ դիրք բռնեցին ձախ սոց-պեմ: Արեմուտքում: Նրանք զարգացրին իմպերիալիզմի կիսամենշելիկյան թեորիան, մերժեցին աղջերի ինքնորոշման սկզբանքը նրա մարքսիստական ըմբռնմամբ (ընդհուպ մինչև անշատումն ու ինքնուրույն պետություններ կազմելը), բացարկեցին (օւելու) զաղութների ու ճնշված յերկրների աղատագրական շարժման լուրջ հեղափոխական նշանակության վերաբերյալ թեղիսը, բացարկեցին պրոլետարական հեղափոխության ու աղջային-աղատագրական շարժման միջն միասնական ճակատ ստեղծում եյին նրանց, առաջ եյին մղում նրանց: Բայց սա չի վոչնչացնում ու չի կարող վոչնչացնել այն փաստը, վոր ձախ սոց-պեմ: Գերմանիայում զրա հետ մեկտեղ իռենց անցյալում ունեյին մի ամբողջ շարք ամենալուրջ քաղաքական ու թեորիական սխալներ, վոր նրանք գեռ չե-

վերաբերյալ թեղիսը և այդ ամբողջ կիսամենշելիկյան շփոթը, վոր աղջային-զաղությային հարցի կատարյալ թերագնահատությունն ե, հակադրեցին բոլշևիների մարքսիստական սխեմային: Հայտնի յե, վոր հետո Տրոցկին վորդեգրեց այդ կիսամենշելիկյան շփոթը և այն ոգտագործեց վորպես պայքարի գործիք լենինիզմի գեմ:

Սրանք են ձախ սոց-պեմ: բոլորին հայտնի սխալները Գերմանիայում:

Ել յես չեմ խոսում գերմանական ձախերի մյուս սխալների մասին, վոր քննադատվել են լենինի համապատասխան հոդվածներում:

Չեմ խոսում նույնպես այն սխալների մասին, վոր նրանք թույլ են տվել բոլշևիների՝ Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակաշրջանի քաղաքականությունը գնահատելիք մասին:

Ինչի մասին են խոսում գերմանական ձախերի այս սխալները, վորոնք առնված են մինչպատերազմյան ժամանակաշրջանի պատմությունից, յեթե վոչ այն մասին, վոր ձախ սոց-պեմ, չնայած իրենց ձախությանը, գեռ չեն աղատագրվել մենշելիկյան բագաժից:

Ի՞արկե, ձախերը Գերմանիայում ունեյին վոչ միայն լուրջ սխալներ: Նրանք իրենց անցյալում ունեն հեղափոխական խոզոր ու լուրջ գործեր ևս: Յես նկատի ունեմ նրանց մատուցած մի ամբողջ շարք ձառայություններն ու նրանց մի ամբողջ շարք հեղափոխական յելությունները ներքին քաղաքականության ու մասնավորապես ընտրական պայքարի հարցերի առթիվ, պառլամենտական ու արտապառլամենտական պայքարի, ընդհանուր գործադրութիւն, պատերազմի, Ռուսաստանի 1905 թ. հեղափոխության և այլ հարցերի առթիվ: Բոլշևիներն ել հենց այս պատճառով եյին նրանց հետ վորպես ձախերի հետ հաշվի նստում ու աջակցում եյին նրանց, առաջ եյին մղում նրանց: Բայց սա չի վոչնչացնում ու չի կարող վոչնչացնել այն փաստը, վոր ձախ սոց-պեմ: Գերմանիայում զրա հետ մեկտեղ իռենց անցյալում ունեյին մի ամբողջ շարք ամենալուրջ քաղաքական ու թեորիական սխալներ, վոր նրանք գեռ չե-

յին աղատովել մենշեիկյան բեռից ու այդ պատճառով կարեք ունեյին բոլշևիկների կողմից ամենալուրջ քննադատության:

Այժմ ինքներդ դատեցնեք, արդյոք Լենինն ու բոլշևիկները կարող եյին աշակցել Արևուտքի ձախ սոց-դեմ, առանց լուրջ վերապահումների, տռանց նրանց սխալների լուրջ բննադրության՝ չդավաճանելով բանվոր դասակարգի շահերին, չդավաճանելով հեղափոխության շահերին, չդավաճանելով կոմունիզմին:

Պարզ չե արդյոք, վոր Սլուցկին, կշտամբելով Լենինին ու բոլշևիկներին այն բանի համար, վորի ասթիվ նա պետք ե վոր վողջուներ նրանց, յեթի ինքը բոլշևիկ լիներ, —մերկացնում ե իրեն մինչև վերջը՝ վորպես կիսամենշեկիր, վորպես գրմակավորված արոցկիսարի:

Սլուցկին յենթադրություն ե անում, թե Լենինն ու բոլշևիկներն Արևուտքի ձախերի մասին իրենց աված գնահատականում յենում եյին իրենց ֆրակցիոն նկատառություց, թե, ասել ե, ոռուսական բոլշևիկները միջազգային հեղափոխության մեծ գործը զոհաբերում եյին իրենց ֆրակցիայի շահերին: Հազիվ թե հարկ կա ապացուցելու, վոր այդպիսի յենթադրությունից ավելի գունդիկ ու նոզգալի վոչինչ չի կարող լինել: Ավելի գունդիկ վոչինչ չի կարող լինել, վորովհետև մինչև անգամ մենշեիկների թվին պատկանող մերկապարանոց գունդկարաններն սկսում են հառկանար, վոր ոռուսական հեղափոխությունը ոռւսների մասնավոր գործը չե, վոր նա, ընդհակառակը, ամբողջ աշխարհի բանվոր դասակարգի գործն ե, համաշխարհային պրոլետարական հեղափոխության գործը: Ավելի նողկալի վոչինչ չի կարող լինել վորովհետև մինչև անգամ Ա Ինտերնացիոնալին պատկանող պրոֆեսիոնալ զրաքարտիչներն սկսում են հասկանար վոր բոլշևիկների հետեւղական ու մինչև վերջը հեղափոխական ինտերնացիոնալիզմը պրոլետարական ինտերնացիոնալիզմի տիպար ե բոլոր յերկրների բանվորների համար:

Այս, ոռուսական բոլշևիկներն առաջին պլանն եյին քաշում ոռուսական հեղափոխության արմատական հարցերը,

ինչպիսիներն են՝ կուսակցության, դեպի բուրժուազիամուկատական հեղափոխությունը մաքսիստների ունենալիք վերաբերմունքի, բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինքի, պրոլետարիատի հեգեմոնիայի, պառամենառական ու արտապամենառական պայքարի, ընդհանուր գործադրությի, բուրժուազիամուկատական հեղափոխության՝ սոցիալիստականի վերանելու, պրոլետարիատի դիկտատորայի, իմպերիալիզմի, ազգերի ինքնորոշման, ճնշված ազգերի ու գաղութների ազատազրական շարժման, այդ շարժման աջակցելու քաղաքականության հարցերը և այլն երանք առաջ եյին քաշում այս հարցերը վորպես փորձաքար, վորի վրա ասուլում եյին ձախ սոցիալ-դեմոկրատների հեղափոխական տոկունությունն Արևուտքում: Արդյոք նրանք այդ բանն անելու իրավունք ունեյին: Այս, ունեյին: Վոչ միայն ունեյին, այլև պարտավոր եյին այդ ձեռվ վարվել: Նրանք պարտավոր եյին այդ ձեռվ վարվել, վորովհետև այդ բոլոր հարցերը միաժամանակ համաշխարհային հեղափոխության արմատական հարցերն եյին, վորի խնդիրներին բոլշևիկները յենթարկում եյին իրենց քաղաքականությունը, իրենց տակտիկան: Նրանք պարտավոր եյին այդ ձեռվ վարվել, վորովհետև միայն այդպիսի հարցերով կարելի յերինչեցին հարկն և ստուգել Ա Ինտերնացիոնալի այս կամ այն խմբավորման հեղափոխականությունը: Հարց է ծագում. ել վժըն և այստեղ ոռուսական բոլշևիկների «Փրակցիոնականությունը» և ինչ գործ ունեն այստեղ «Փրակցիոն» նկատառությունը:

Լենինը դեռևս 1902 թվին իր «Ի՞նչ անել» բրոշյուրում գրում եր, վոր «ապամուրյան մեր առաջ այժմ գրել ե մի մերձավարտույն խնդիր, որ ամեն մի յերկրի պրոլետարիատի բարը մեր ձախ վորություն և խնդիրներից ամեն ի ց ա վ ե լ ի հ ե դ ա փ ո խ ս ա կ ա ն ե ն ե », վոր՝ «այդ խնդիրի իւրկանացումը, —վո՞չ միայն յեփրապական, այլև ասիտկան սետկցիայի ամենահզոր պատվարի հանդումը, —ոռուսիան պրոլետարիատին կդրաներ միջազգային հեղափոխական պրակտարիատի ավանդարդը»: «Ի՞նչ անել բրոշյուրի լույս տեսնելու ժամանակից անցել ե 30 տարի: Վոչ վոր չի համարձակվի

ժխտել, վոր անցքերն այդ ժամանակաշրջանում փայլուն կերպով հաստակեցին և նինինի խոռքերը: Բայց արդյոք սրանից չի հետևում, վոր սուսական հեղափոխությունը յեղել ե (և մնում ե) համաշխարհային հեղափոխության հանգուցակետը, վոր սուսական հեղափոխության արմատական հարցերը միաժամանակ հանդիսանում եյին (և այժմ ել հանդիսանում են) համաշխարհային հեղափոխության արմատական հարցերը:

Պարզ չե՞ արդյոք, վոր միմիայն այսպիսի արմատական հարցերով կարելի յեր իսկապես ստուգել ձախ ուղղ, հեղափոխականությունն Արևմուտքում:

Պարզ չե՞ արդյոք, վոր այն մարդիկ, վորոնք այս հարցերը քննության են առնում վորպես «Փրակցիոն» հարցեր, — մերկացնում են իրենց մինչև վերջը վորպես գոեհկաբաններ ու վերասերվածներ:

3) Սլուցկին պնդում ե, թե դեռ չեն գտնվել բավարար քանակով պաշտոնական վավերագրեր, վորոնք վկայելիս մինեյին և նինինի (բոլշևիկների) վճռական ու անհաջող պայքարի մասին ցենտրիզմի դեմ: Նա այս բյուրոկրատական թեղիսը դործ ե ածում վորպես անժխտելի փաստարկ հոգուտայն գրութիւ, թե և նինինը (բոլշևիկները), հետևաբար, թերագնահատում եր Ա Ինտերնացիոնալում յեղած ցենտրիզմի վտանգը: Դուք հանձն եք առնում դիսկուսիա մզել այս ցնդաբանության դեմ, այս ժուլիկական պատրվակազործության (կրյուկուրօրշո) դեմ: Բայց իսկապես ինչ գիսկուսիա բան կա այստեղ: Միթե այնպես ել պարզ չե, վոր Սլուցկին վավերագրերի վերաբերյալ դրույցներով ջանում է քողարկել իր այսպես կոչված՝ դիրքավորման վողորմելիությունն ու կեղծիքը:

Սլուցկին գոյություն ունեցող կուսակցական վավերագրերը բավական չի համարում: Ինչնու, բնչ հիման վրա: Միթե Ա Ինտերնացիոնալի գծով, ինչպես նաև սուսատանյան սոցիալ-դեմոկրատիայի ներկուսակցական պայքարի գծով, ինչպես նաև սուսատանյան պայքարի գծովը հայտնի վավերագրերը բավական չեն, վորպեսզի ամենայն պարզությամբ ցուցադրվի և ինչ կանուն ու բոլշևիկների հեղափոխական անհաշտությունն ու առաջարկությունները հանդիսանալու մեջ կամ իրենց սեփական յերկրում փաս չելին անում՝ իրենց ոպորտունիտների հանգեսլ, իրենց բուրժուազիայի հանգեսլ: Արդյոք և նինինն այդ պատճառով չեր սովորեցնում մեզ հեղափոխական կուսակցությունները, հոսանքները, լիգերներին ստուգել վնչ թե նրանց գեկլաբացիաներով ու բանաձեռներով, այլ նրանց գարծերով:

Նիստների ու ցենտրիստների դեմ մղած նրանց պայքարում: Սլուցկին առհասարակ ծանրիթ ե արդյոք այդ վավերագրերին: Ել ինչ փաստաթղթեր են հարկավոր նրան:

Յենթադրենք, թե գտնվեն, բացի արդեն հայտնի վավերագրերից, մի կույտ այլ վավերագրեր, ասենք, բոլշևիկների բանաձեռն վորոնք մի ավելորդ անգամ խոսում են ցենտրիզմի վոչչացման անհրաժեշտության մասին: Արդյոք այս նշանակում ե, վոր միմիայն թղթե վավերագրերի առկայությունը բավկան ե, վորպեսզի ցուցադրենք բոլշևիկների իսկական հեղափոխականությունն ու իսկական անհաշտությունը ցենտրիզմի նկատմամբ: Ել մի բացի անհուսալի բյուրոկրատներից, կարող ե վատահել միմիայն թղթե վավերագրերին: Ել մի բացի արխիվային առնետներից, չի հասկանում, վոր կուսակցություններին ու լիգերներին հարկավոր ե ստուգել ամենից առաջ իրենց գարծերով, և վոչ թե միայն իրենց գեկլաբացիաներով: Պատմությունը քիչ սոցիալիստներ չի ճանաչում, վորոնք պատրաստակամությամբ ստորագրում եյին ուղածդդ հեղափոխական բանաձեռնը, վորպեսզի կուսակցություններին (օտքածայք) ձանձրացնող քննադատներից: Բայց այդ դեռ չի նշանակում, թե նրանք այդ բանաձեռները կիրառում ելին կյանքում: Ապա՝ պատմությունը քիչ սոցիալիստներ չի ճանաչում, վորոնք փրփուրը լիգերաններին պահանջում եյին այլ յերկրների բանվորական կուսակցություններից հեղափոխական ամենանվազական կուսակցություններից հեղափոխական ամենանվազական կուսակցությունները: Բայց այդ դեռ չի նշանակում, թե նրանք իրենց սեփական կուսակցության մեջ կամ իրենց սեփական յերկրում փաս չելին անում՝ իրենց ոպորտունիտների հանգեսլ, իրենց բուրժուազիայի հանգեսլ: Արդյոք և նինինն այդ պատճառով չեր սովորեցնում մեզ հեղափոխական կուսակցությունները, հոսանքները, լիգերներին ստուգել վնչ թե նրանց գեկլաբացիաներով ու բանաձեռներով, այլ նրանց գարծերով:

Պարզ չե՞ արդյոք, վոր յեթե Սլուցկին իսկապես ցանկանում եր ստուգել և նինինի ու բոլշևիկների անհաշտությունը գետի ցենտրիզմն ունեցած նրանց վերաբերմունքի մեջ, նա իր հոդվածի հիմք պետք ե դարձներ վիչ թե

առանձին վագիրազրերն ու յերկու-յերեք անձնական նամակներ, այլ բոլցիկների ստուգումը նրանց գործերով, նրանց պատմությամբ, նրանց գործողության ներով։ Միթե մեզանում, ուստատանյան սոցիալգեմոնկրատիայի մեջ, չկային սպորտունիսաներ, ցենտրիստներ։ Միթե բոլցիկները վճարական ու անհաշա պայքար չեյին մզում բոլոր այդ հոսանքների դեմ։ Միթե այդ հոսանքները թե գաղափարապես, թե կազմակերպորեն կապված չեյին Արևմուտքի սպորտունիսաների ու ցենտրիստների հետ։ Միթե բոլցիկները ջարդուփշուր չարին սպորտունիսաներին ու ցենտրիստներին այնպես, ինչպես նրանց ջարդուփշուր չեր արել աշխարհիս վոչ մի ձախ խումբ։ Ի՞նչպես կարելի յե այս ամենից հետո առել, թե կենինն ու բոլցիկները թերագնահատում եյին ցենտրիզմի վտանգը։ Ինչու Սլուցկին արհամարեց այս փաստերը, վորոնք վճռողական նշանաւկություն ունեն բոլցիկների բնութագրման համար։ Ինչու նա կենինին ու բոլցիկներին նրանց գործերով, նրանց գործողություններով ստուգելու ամենից ավելի հուսալի մեթոդը չոպտագործեց։ Ինչու նա գիրտգառեց պատահաբար հավաքած թղթերը փորփելու ավելի պահառ հուսալի մեթոդ։

Վորովինետն բոլցիկներին նրանց գործերով ստուգելու ավելի հուսալի մեթոդին գիմելը մի ակնթարթում գլխիվայր չուռ կտար Սլուցկու ամբողջ դիրքավորումը։

Վորովինետն բոլցիկներին իրենց գործերով ստուգելը ցույց կտար, վոր բոլցիկներն աշխարհում միակ հեղափոխական կազմակերպությունն են, վորը մինչև վերջը ջարդուփշուր արեց սպորտունիսաներին ու ցենտրիստներին և նրանց գուրս վոնդեց կուսակցությունից։

Վորովինետն բոլցիկների իսկական գործերին ու իսկական պատմությանը դիմելը ցույց կտար, վոր Սլուցկու ուսուցիչները—տրոցկիստները—այն զիսավոր ու հիմնական խումբն եյին, վորը Ռուսաստանում ցենտրիզմ եր արժատավորում և դրա համար հանձին Ոգոստոսյան բոլցիկնատուկ կազմակերպություն եր ստեղծել՝ վորպես ցենտրիզմի նշան։

Վորովինետն բոլցիկներին նրանց գործերով ստուգելը վերջնականապես կմերկացներ Սլուցկուն վորպես մեր կուսակցության պատմությունը խարդախողի, վորը փորձում և մինչպատերազմյան ժամանակաշրջանի տրոցկիզմի ցենտրիզմը քողարկել կենինի ու բոլցիկների դեմ ուղղված զրպարտական մեղադրանքներով, թե իր նրանք թերապնահատել են ցենտրիզմի վտանգը։

Ահա՝ թե ինչպես ե, ընկեր խմբագիրներ, Սլուցկու և նրա հողվածի բանը։

Դուք տեսնում եք, վոր խմբագրությունով սխալ և գործել՝ դիմկուսիա թույլատրելով մեր կուսակցության պատմությունը խարդախողի հետ։

Ի՞նչը կարող եր խմբագրությանդ մեկ դեպի այդ սխալ ուղին։ Յես կարծում եմ, վոր նրան դեպի այդ ուղին մղել ե նեխած լիբերալիզմը, վորն այժմ վորոշ չափով տարածված ե բոլցիկների մի մասի մեջ։ Բոլցիկներից վոմանք կարծում են, թե տրոցկիզմը կոմունիզմի մի ֆրակցիան ե, ձիւան ե, սխալվող քիչ հիմարություններ չանող, յերբեմն մինչեւ իսկ հակախորհրդագյին, բայց և այնպես կոմունիզմի ֆրակցիան։ Այսակից՝ վորոշ լիբերալիզմ տրոցկիստների ու տրոցկիստորեն մտածող մարդկանց նկատմամբ։ Հաղիվ

թե հարկ կա ապացուցելու, վոր նման հայացքը տրոցկիզմի նկատմամբ՝ խորապես սխալ ու վնասակար ե։ Իրոք տրոցկիզմն արդեն վաղուց գաղարել ե կոմունիզմի ֆրակցիան լինելոց։ Իրոք տրոցկիզմն առաջավոր ջոկատն ե հականեղափոխական բուրժուազիայի, վորը պայքար և մզում կումունիզմի դեմ, խորհրդային իշխանության դեմ, ԽՍՀՄ-ում տցիալիզմ կառուցելու դեմ։

Հականեղափոխական բուրժուազիային մի ավեց բարշկումի դեմ ուղղված այնպիսի մի հոգևոր զենք, ինչպես այն թեզիսը, թե սոցիալիզմի կառուցումը մեր յերկրում անհնարին ե, ինչպես այն թեզիսը, թե բոլցիկների վերաբերումն անխուսափելի յի և այն։ Այդ զենքը նրան տրոցկիզմը տվեց։ Չի կարելի պատահականություն համարել այն փաստը, վոր բոլոր հակախորհրդագյին խմբավորումները ԽՍՀՄ-ում բորհրդային իշխանության դեմ պայքա-

բելու անխուսափելիությունը հիմնավորելու վերաբերյալ  
իրենց փորձելում վկայակոչում եյին տրոցկիզմի հայտնի  
թեղիսը մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու անհնարինու-  
թյան մասին, խորհրդային իշխանության վերաբերման  
անխուսափելիության մասին, կապիտալիզմին վերադառնա-  
նալու հավանականության մասին:

Հականեղափոխական բուրժուազիային ԽՍՀՄ-ում մի  
տվեց տակտիկական զենք՝ լուրիչրդային իշխանության գեմ  
ուղղված բացահայտ յելույթների փորձերի ձևով: Այդ զենքը  
նրան տվին տրոցկիստները, վորոնք փորձում եյին հակա-  
խորհրդային ցուցեցիր սարքել Սոսկվայում ու Լենինգրա-  
դում 1927 թվի նոյեմբերի 7-ին: Սա փաստ է, վոր տրոց-  
կիստների հակախորհրդային յելույթները բարձրացրին  
բուրժուազիայի վոգին ու սահմալուծեցին բուրժուական  
մասնագետների մասաւարար աշխատանքը:

Հականեղափոխական բուրժուազիային մի տվեց կազ-  
մակերպական զենք՝ ընդհատակյա հակախորհրդային կազ-  
մակերպություններ ստեղծելու փորձերի ձևով: Այդ զենքը  
նրան տվին տրոցկիստները, վորոնք իրենց սեփական  
հակաբոլշևիկյան անլեզալ խումբն եյին կազմակերպել: Սա  
փաստ է, վոր տրոցկիստների ընդհատակյա հակախորհրդա-  
յին աշխատանքը հեշտացրեց հակախորհրդային խմբավո-  
րումների կազմակերպական ձևավորումը ԽՍՀՄ-ում:

Տրոցկիզմը հականեղափոխական բուրժուազիայի առա-  
ջավոր ջոկատն է:

Ահա թե ինչու լիբերալիզմը տրոցկիզմի նկատմամբ,  
թեկուզ և ջախջախված ու դիմակավորված տրոցկիզմի, քյալ-  
ւագյողություն է, վորը սահմանակցվում է հանցագործու-  
թյան հետ, բանվոր դասակարգին դավաճանելու հետ:

Ահա թե ինչու վորոշ «գրականագետների» ու «պատ-  
մագետների» փորձերը՝ մաքսանենգորեն մեր գրականության  
մեջ ներքաշելու դիմակավորված տրոցկիստական, հսուական  
պետք և բոլշևիկների կողմից վճռական հականարվածի  
հանդիպեն:

Ահա թե ինչու չի կարելի տրոցկիստական մաքսանենգ-  
ների հետ գրական դիմակարիա թույլատրել:

Իսձ թվում ե, վոր տրոցկիստական մաքսանենգների  
կարգին պատկանող «սպատմագետներն» ու «գրականագետ-  
ները» ջանում են իրենց մաքսանենգ աշխատանքն անց-  
կացնել առայժմ յերկու դժով:

Նախ նրանք աշխատում են ապացուցել, թե Կմինը  
պատերազմին նախորդած ժամանակաշրջանում թերազնա-  
հատում եր ցենտրիզմի վասնգները, ընդումին՝ անփորձ  
ընթերցողին և թողնվում կուսիւ, վոր, հետևաբար, կենինս  
այն ժամանակ զեռւս իսկական հեղափոխական չեր, թե նա  
այլպիսին դարձավ լոկ պատերազմից հետո, այն բանից  
հետո, յերբ Տրոցկու ոգնությամբ «վերադինվեց»: Այս տե-  
սակի մաքսանենգների տիպիկական ներկայացուցիչ կարելի  
յէ համարել Սլուցկուն: Մենք վերևում տեսանք, վոր Սլուց-  
կին և Ընկերությունը չարժեն, վոր նրանցով յերկար  
զբաղվենք:

Եւեկրորդ՝ նրանք աշխատում են ապացուցել, թե պա-  
տերազմին նախորդած ժամանակաշրջանում կենինը չեր  
համականում բուրժուական-դեմոկրատական հեղափոխության  
սոցիալիստական հեղափոխության վերաճելու անհրաժեշ-  
տությունը, ընդումին, անփորձ ընթերցողին և թողնվում  
կուսիւ, վոր, հետևաբար, կենինս այն ժամանակ զեռւս  
իսկական բոլշևիկ չեր, վոր այլպիսի վերաճման անհրա-  
ժտությունը նա համացավ միայն պատերազմից հետո,  
այն բանից հետո, յերբ նա Տրոցկու ոգնությամբ «վերա-  
դինվեց»: Այս տեսակի մաքսանենգների տիպիկական ներ-  
կայացուցիչ կարելի յէ համարել «Համեկ(բ)կ պատմության  
գաղանթաց»-ի նեղինակ վորումվիչին: Ճիշտ է, կենինը դեռև  
1905 թվին գրում եր, վոր՝ «գենուկրատական հեղափոխարքունից  
մենք իսկաւուն եեր կական անցնել, և հենց մեր ուժի համեմատ,  
զիտափից ու կազմակերպիած պրոլետարիատի ուժի համեմատ,  
—կական անցնել սոցիալիստական հեղափոխության», վոր՝  
«մենք կաղմնակից ենք անը անընդհանուր հեղափոխության», վոր՝  
«մենք կանգնակից ենք անը կառանամբին»: Ճիշտ է, կարելի յեր-  
նման կարգի բազմաբազում փաստեր ու վավերագրեր գտնել  
կենինի յերկերում: Բայց վորումվիչներն ինչ գործ ունեն  
կենինի կյանքից ու գործունեցությունից առնված փաս-

տերի հետ: Վոլոսեվիչները գրում են, վորպեսզի, բոլշևիկյան պայմանվ ներկվելով՝ իրենց հակալենինյան կոնտրարանդը ներքաշեն, ստեն բոլշևիկների հասցեյին ու խարդախեն բոլշևիկյան կուսակցության պատմությունը:

Դուք տեսնում եք, վոր Վոլոսեվիչներն արժեն Ալուց-կիներին:

Սրանք են արացկիստական մաքսանենդների «ուղիներն ու ուղերաժանները»:

Ինքներդ հառկանում եք, վոր խմբագրությանդ գործը չե հեշտացնել նման «պատմագետների» մաքսանենդային գործունելությունը՝ դիսկուսիոն արիբունա արամագրելով նրանց:

Խմբագրությանդ խնդիրն, ըստիս, այն ե, վոր բոլշևիկ-մի պատմության հարցերը հասցնեք պատշաճ բարձրության, մեր կուսակցության պատմությունն ուսումնասիրելու գործը գնեք զիտական, բոլշևիկյան ուելտերի վրա և ուշադրությունը նրեք մեր կուսակցության պատմության արացկիստական ու տմեն տեսակի այլ խարդախիչների գեմ՝ սիստեմատիկաբար պոկելով նրանց դիմակները:

Սա առավել ևս անհրաժեշտ ե, քանի վոր մինչե իսկ մեր միքանի պատմագետները, — յես խոսում եմ անչափետ պատմագետների մասին, մեր կուսակցության բոլչելիյան պատմագետների մասին, — ազատ չեն այնպիսի սխալներից, վարոնք ջուր են լցնում Ալուցկիների ու Վոլոսեվիչների ջրազագին. Այստեղ բացառություն չի կազմում, ցավոք սրտի, նաև ընկ. Յարութափսկին, վորի Համկ(ր)կ պատմության վերաբերյալ գրքույկները, չնայած նրանց արժանիքներին, պարունակում են սկզբունքային ու պատմական բնույթի մի շարք սխալներ:

Կոմ. բարեվով՝ հ. Ստալին

«Пролетарская революция»  
1931 թ. № 6 (113)



Խմբագրեց Յ. Մարտիրոսյան  
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան  
Սրբագրիչ Հ. Մանեկելյան  
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Արովյան

Դիմիլիսի լիազոր կ—3330 հրատ. № 614,


Պատվեր № 163, տիբաժ 5.000

Հանձնվել ե արտադրության 19/XI 1938 թ.

Ատորագրվել ե տպագրելու 4/XII 1938 թ.

Գինը 25 կ. կազմ 30 կ.

Կատերատ-Քաղաքական գրականության հրատարակության տպարան,  
Եկրան, Ալավերդյան № 65



ii

ii

xx

ii

ii

ii

ՀՀ Ազգային գրադարան



NL0184026

ԳԻՆԸ 55 Կ.

И. СТАЛИН  
О НЕКОТОРЫХ ВОПРОСАХ  
ИСТОРИИ БОЛЬШЕВИЗМА

Армгиз—Издательство полит. литературы,  
Ереван. 1938